


ԲԱՐՁՐ. Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊՍ.Ի ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՀԻՒՍԷՅՆ ԹԱԳԱՌՈՐԻՆ

Նախագես անուած Ժամադրութեան մը համաձայն, Մայիս 17ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Տեղապան Տ. Խադ Արքեպս. Աջապահեանք, ընկերակցութեամբ Երուսաղէմի Հայր Պատր. Տեղապան Տ. Եղիեկ Արքեպս. Տէրտէրեանի, ինչպէս նաև Ս. Արքուոյ Բարձրագոր Պատր. Կարպիս Հինգլեանի եւ Ամմանէն Տիար Հայկ Փէլքեհեանի, առաւուան Ժամը 10.30ին այցելեց Յորդանանի Քազաուր Հիւսէյն Ա.ի: Ընդունելութիւնը տեղի ունեցաւ Պատման պալատին մէջ եւ տեւեց 25 վայրկեան:



Բարձր. Խադ Արքեպան Քազաուրին յայտնեց նախ իր արտազին շնորհակալութիւնները եղած ընդունելութեան համար, յետոյ ըսաւ «Ընդառաջելով մեր Արքեպան Եղբոր Եղիեկ Արքեպանի հրաւերին. Երուսաղէմ եկայ յուխս եւ երկրպագութիւն Ս. Տեղեաց, այս ափով չէի կրնար բերանալ պարսկանութեանս մէջ Ձերդ Վեհափառութեան բերելու իմ եւ Լիբանանի եւ Սիւրիոյ Հայ Ժողովուրդի յարգանքն ու արտազին շնորհաւորութիւնը Ձեր բարեբասիկ եւ երջանիկ ամուսնութեանը առիթով: Հաշիմական տնտեսի բոլոր քազաուրները, իրենց իշխանութեան սկզբնաւորութենէն սկսեալ միտ հայրախնամ վերաբերմունքով ցոյց տուած են Հայ Ժողովուրդի նկատմամբ. ետխասագիտութեամբ կը լսեմ որ Ձերդ Վեհափառութիւնը հարազատ յաջորդն է իր մեծանուն նախորդներուն:

Այս առիթի կը մտորեմ ու կ'աղօթեմ որ Տէր անասան պահէ Հաշիմական Գահը եւ Ձերդ Վեհափառութեան պարգեւէ երկար եւ երջանիկ տարիներ կարենալ վայելելու Ձեր հպատակներուն սերն ու գուրգուրանքը:

Բարձր. Խադ Արքեպանի խօսած միջոցին երիտասարդ Քազաուրը սիրալիբ եւ անուշ կը ժպտէ, յետոյ իբրև պատասխան ըսուածներուն յարեց «Բարի եկած էք Արքեպան Հայր, պատուուած կը զգամ ինձի հետ Ձեր հանդիպելուս: Շնորհակալ եմ Ձեր ազնիւ զգացումներուն համար, Հայերը իմ լաւագոյն բարեկամներս եւ հպատակներս կը նկատեմ, որոնք շնորհի իրենց ընդունակութիւններուն լաւ դիմեցն ունին»:

Յետոյ երկու Արքեպանները իրենց հետեւորդներուն հետ միասին լուսանկարուեցան պալատի դահլիճին մէջ, ապա խնդրելով բոյջըրութիւն՝ մեկնեցան: